

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ




ԱՆԴՐԱՆԻԿ,  
ԱՅՍԻՆՔՆ՝  
ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ



*Թարրը տեսի է այս գյուղը ծաղիլան,  
Թարրը տեսի է սարն այս վեհադանն,  
Հրնվի է փայրի հոգին փաշկառան,  
Քայց ես... չքվի է նա անփրուցարն:*

**ԱՆԴՐԱՆԻԿ,  
ԱՅՍԻՆԸՆ՝  
ԱՌԱԶԱՄԱՐՏԻԿ**




Այնդէ՛ս տխար, հանգիստ ու լուռ  
Նայու՛մ ես դու աշխարհին,  
Գողում է սիրուն իմ անհազարդ,  
Բողին թվում է օտարի,  
Անցնում ես ու...ինձ չես նայում,  
Նայի՛ր, սրտիս դռը ալիք,  
Ինձ թվում է՝ խաղ ես անում,-  
Կյանքս գաթճրսն խաղալիք...

18.02.1986


Գ. Կանդուս

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ԱՆԳՐԱՆԻԿ,  
ԱՅՍԻՆԵՆ՝  
ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ**

«ՀՈՐԻԶՈՆ»  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ  
1997



**ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Ա.**

**Գ 313. «Անդրանիկ, այսինքն՝ առաջամարտիկ»**  
(ակնարկ՝ նամակով և բանաստեղծություններով միահյուս), Ստ., «Գորիզոն» հրատարակչություն, 1997, 32 էջ, տպ.՝ 1000:

## ԻԲԻԵՎ ՍԿԻԶԲ,

կամ՝ նախ ծանոթացման կարգով...

**ԱՆԳՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ.** Ծնվել է 1967-ի հունիսի 8-ին, Մարտակերտի շրջանի Կոճողտ գյուղում: Մովորել է տեղի միջնակարգում, այնուհետև՝ Եերթին Հոռոթաղի թիվ 120 ոլորՖ տեխստամնարանում. մասնագիտացել է որպես էլեկտրագողող, բայց խաղաղ աշխատանքով զբաղվելու բախտ տրված չէր նրան, քանի որ արդեն դարձ նրեում էր, որ «կուտակվում են անօղերը դատերազմի ու ճանի»: Հենց առաջին օրերից էլ ընկավ արցախյան շարժման հորձանուսը: Իսկ երբ սկսվեցին մարտական գործողությունները, նա արդեն իր իսկական դերի մեջ էր: Տիրադեռում էր գեների բոլոր տեսակներին և օգտագործում էր բոլորն անխախտ: Մասնակցել է մարտական բազում գործողությունների՝ Քելբաչարից մինչև Գուբարյա: Լինելով Մարտակերտի զաշտոդանական շրջանի զինվոր, հիմնարար մասնակցություն է ունեցել Օճաթի լեռնանցքի զաշտոդանության և շրջանի գյուղերի ազատագրման գործում:

Վիրավորվել է բազմաթիվ անգամ: Բռնժան մասին երբեք չի մտածել: Զի լսել տենցիներին, հատկապես՝ մոր հորդորները, և վիրավոր վիճակում էլ շատադել է ճակատաչին գիծ՝ ընկերների մոտ:

Հասանդայայի ազատագրման համար մղվող մարտը 1994-ի ապրիլի 18-ին վերջինն էր Անդրանիկի համար: Այս անգամ էլ մարտադաշտ էր եկել դեռ բեկորները մարմնի մեջ, գնդակը՝ կրծքի տակ: ...Անհավասար մարտում մեր լղաշտղանական ուժերը հարկադրված ետ են քաշվում և՛ առանց կորստի, քանի որ տնխափան էր գործում Անդրանիկի գնդացիքը: Բայց զոհ, այնուամենայնիվ, եղավ. հակառակորդի դիպուկահարի գնդակից ընկավ Անդրանիկը, իր հետ գերեզման տանելով անկատար երազների մի ամբողջ աշխարհ...

## ...ԵՎ ՀԵՏՈ՛

Բարև, եղբայրս:

Ստացա մամակդ: Կարճ գրված նամակդ: Գե՛ կարևորը կարճն ու երկարը չէ: Կարևորը գրելն է. նստիր ու գրիր: Երկու բողետում, երկու տողով: Երկար հարկավոր չէ: Գրիր, որ լավ ես: Ու՛ վերջ: Միայն ես խմանամ, որ լավ ես: Ու՛ վերջ: Ես էլ կարճ եմ գրում. մենք բոլորս լավ ենք: Սամվելը չարաճճիություններ է անում, ամբողջ օրը տարվում է խաղով, դասերը սովորելուն քիչ ժամանակ է հատկացնում: Մուսանը փոխադրվել է երրորդ դասարան: Ամբողջ օրը ուշքն ու միաքը դասերի վրա է, մեկ էլ տեսար սկսում է ոտանավոր մտմտալ, բայց թղթին չի հաճճնում:

Իսկ Մարիամիկը... Ամբողջ օրը բակի երեխաների հետ է: Վազվզում է անհոգ: Գու չես տեսնում դա, չես





*Իմ տատը Խաչունց Անդրին է,  
Ականջս նրա կանչին է...*



խում (լինե՛ր այնուես, որ տեսնեի՛ր, լսեի՛ր):

Դու էլ գիտես երևի, եզրայրս, որ կարևորն աղբյւն է, աղբիր: Աղբիր մինչև վերջ, ինչքան կներքիքի ավայունդ, կամքդ, կարողութունդ: Ու կովիր, կովիր մեր ոխերին թշնամու դեմ: Այն թշնամու, որ համարձակվել է մտնել մեր գյուղը, մեր տունը ու թալանել բոլորիս կայքը, ունեցվածքը: Բայց մի բան թալանել չի կարողացել՝ մեր ուժը, մեր կամքը, մեր հայրենասիրտությունը: Ներքի, ես ինքս ինձ հետ եմ խոսում. չեմ կշտամբում քեզ, իսկ դա հիշիր, որ թոցավն իմն է նաև, քո տառապանքն իմ հոգին ավելի է հույժանարում...



... Ես ուր տարեկան երեխա էի, երբ որդես բարի ավետիս և ի լուր ամենքի՝ ազդարարվեց քո ծնունդը: Դեռ մինչև այսօր ականջներիս մեջ զիլ-զահզ ծլնգում է այդ ձայնը:

Ու որոշեցի հենց այդտեղից էլ սկսել...

*... Հազար իննհարյուր վաթսուներթ թվի  
Հունիսի ութի վաղ առավոտյան  
Դեռ քնաթաթախ գյուղի ականջում  
Հնչում է մի ձայն:*



*Մեր ավեր տունը Կոճողոտում  
Գեո հուշն է ողանում քո մանկության,  
Իսկ սիրտս ցավի որդն է ուտում,  
Որ չկաս էլ դու, իմ լավ եղբայր:*



*Եվ կիսաճորտան ձայնն այդ աշիրվում,  
Պատեղատ խփվում, փնտրում բաց դռներ.  
- Լսե՛ք, մեր Լեւան մի ոսկեզանգոյր  
Տղա է բերե՛լ...*

*Ձայնն է աշիրվում մոր աչքերի մեջ:  
Երկունքի ցավից կարծրացած, լցված  
Երկու ոլիրկ կաթիկ իրար նրելով  
Գողորվում են ցած...*

*Իսկ մանկիկն աննոզ վերտվարում է  
Ոտ ու թաթերի կաղանքները իր,  
Ու նայում, նայում մի լուռ հայացքով  
Անհա՛յտ աշխարհին...*

Այդդեռ սկսեցի ու թողեցի կիսատ: Հեռագայում, իհարկե, 1994-ի մայիսին: Իսկ այդ օրը՝ երբ դու ծնվեցիր, ևս դեռ ընդամենն ութ տարեկան և իմ տղայական հրճվանքին չափ ու սահման չկար՝ ինձ եղբայր է ծնվել, ուրեմն՝ մենակ չեմ լինելու աշխարհում:

Այդդեռ, օր-օրի մեծանում էիր դու աննոզ ու գեղեցիկ, նաև անհանգիստ, որի համար էլ՝ հանդում խոտի դեզ վառվեր կամ թե լինեիր մի ուրիշ տատահար, անմիջադեռ քեզ մատնացույց կանեին, իբր՝ նա կլինի, ուրիշ՝ էլ ո՞վ: Ու այդդեռ՝ կռվելով բո մանկության հետ, դու մեծացար: Մեծացար՝ մանկությունից ճաշակելով երեխայական կռիվների դառնությունը, նաև՝ հաղթանակների բերկրանքը:



*Գեռ դատանյակ՝ այս նկարում,  
Բայց հայացքից հուրն է ցայում...*

Մի օր էլ, երբ Մարտակերտի դաշտային օրևանոմ լաբա-  
խաղացի ծաղրածուն մարտահրավեր նետեց քո հասա-  
կակից մի խումբ տղաների՝ բոլորը ետ ընկրկեցին, բայց,  
երբ խմբից մեկը համարձակ քայլերով մոտեցավ դեղի  
ծաղրածուն՝ ժողովուրդը լարվեց՝ ո՞վ է, ու՞մ աղան է:  
Պատասխանն, իհարկե, տատրաստ կար՝ ո՞վ կլինի,  
Արսենի Անդրանիկ տղան: Եվ քո անունն էլ այնքա՛ն  
սագական էր քեզ: Անդրանիկ, այսինքն՝ քաջ, աներկյուղ,  
անվարան: Անդրանիկ, այսինքն՝ առաջնեկ, առաջնային,  
առաջամարտիկ: Ամեն տեղ ու ամեն ինչում՝ Անդրանիկ:  
Ամեն տեղ ու ամեն ինչում՝ իր բարձրության վրա: Եվ եթե  
Անդրանիկ, առա՛ջ զինվոր, որովհետև ոխերիմ է մեր բշա-  
մին, ինչդեռ օձը, և թույն է նրա ամեն մի բաղցր-մեղց  
սիլի-բիլին: Պատերազմ լինի, թե խաղաղ ժամանակներ:  
Գո՛ւ գիտեիր այդ, ոչ միայն՝ երբ «կատարդ կարծրում էր»,  
այլ նաև սթափ վիճակում: Ու շատ են եղել դեղքեր, երբ  
ընկերներիդ առաջարկում էիր. «Չգնա՞նք թուրք ծնծկո»:  
Իսկ թուրք՝ ինչքան ասես: Մորեխի նման լցվել էին Մար-  
տակերտի ձորերը: Լցվել էին ալիեյան-կետրկույան կլանի  
«արժանի» կամակատարների՝ մամոնցա-բաղունցական-  
ների բացարձակ թողտվությամբ:

- Այսօր ամսի քանի՞սն է,- Մարտակերտի ավտո-  
կայարանի տարածքում ընկերոջդ՝ Գագոյի հետ կանգնեց-  
նում ես մի տատահական թուրք երիտասարդի:

- Ադրիլի 24-ը:

- Գիտե՞ս ինչ օր է այսօր:

- Ի՞նչ օր է,- հարցին հարցով է տատասխանում

թարքը:





*Քեզ թվում է մեծ ես արդեն,  
Իսկ ինձ համար փոքրիկ ես դեռ...*

- Հիմա կասեմ,- ու փորին մի լավ որ հասցնում ես՝ իսկույն կուչ է գալիս տեղում: Իսկ մի հասա էլ, որ դնչին է ստանում՝ փռվում է գետնին: Նրան «լավ» ես հիշեցնում, թե ինչ օր է աղբիկի 24-ը, այնուհետ, որ մինչև կյանքի վերջը չմոռանա:

Ու այդպես՝ միշտ, և դա աննկատ մնալ չէր կարող: Լրտեսական ամենատեսալի աչքը հասցեատիրոջն էր հասցնում քո ամեն քայլի «ծավալան արձանագրությունը» և մի օր էլ ամենակարող ձեռքը քեզ «վառնեց դրախտից»: Բայց դու գիտեիր, ի սկզբանե, որ վաղ թե ուշ՝ կդայրի այն, ինչը տխրի տայրեր: Տերևի համար՝ տխրի տայրի բողբոջը, ծաղիկ դառնալու համար՝ կոկոնը, սերմը տխրի տայրի, որ արտում հասկը շատանա: Ազատ ու անկասկա աղբիկու համար՝ համբերության բաժակը՝ ժողովրդի ցատունը տխրի տայրի:

Եվ որայրեց: Ի լար աշխարհի և ամենեցուն: Ժողովարդը հորդաց, լցվեց փողոցները: Հրադարակները ծովի էին նմանվում՝ մերթ խաղաղ, ալիք-ալիք կոհակվում էին, մերթ էլ՝ այնույիսի փոթորիկ էր լինում, որ ծովը մակընթացություն ու տեղատվություն էր աղբում: Տեղատվություն, ինտրիկ, հազվադեպ էր ու ժամանակավոր, իսկ մակընթացությունը կասեցնել հնարավոր չեղավ ոչ մի հակազդող ուժի կողմից: Եվ ինչքան տարածքներ խաղաղ ճանապարհով յուրացրել էր թուրքը խաղաղ ժամանակներում՝ մակընթացության բերանն ընկան:





*Գու և Ալվարդը... Միշտ՝ միասին:  
Թախծոմ է քույրդ միշտ քո մասին...*

Գու էլ ծովի մեջ էիր՝ մակընթացության առաջնա-  
մասում՝ քո գեղացրով, քո Ֆ ազոտով, քո նռնականետով,  
քո ավտոմատով, քո... Բոլոր գեներերը բռնն էին, որովհետև  
արծվի սիրտ ունեիր և արծվային քո կարողություններով  
դու եղար ամենուր՝ Օճարից մինչև Ղարաբաթու, Քելրաջար,  
Լաչին, Ադդամ... Օճարի ձյուներում դու ցրտահարել ևս  
ուտքերդ, Արաքսի ջրերում լվացել, տաքացրել: Երբեք չես  
ձգտել փառքի, դարգևի՝ առավել ևս: Քո դարգևն աստ-  
վածատուր էր՝ լինել քաջ ու համարձակորեն նետվել գրոհի:  
Մարտը քո տարերքն էր, թշնամուն ոչնչացնելը՝ ամենամեծ  
ցանկությունդ: Դու մինչև վերջ մնացիր այդդիսին: Ու մե-  
օր էր... սղառվեցիր, որովհետև կյանքում անսղառ ոչին  
չկա: Մուս է, երբ ասում են՝ «ձայնդ անսղառ»: Մղառ-  
վում է ոչ միայն ձայնը, անգամ ծովի ջուրը: Անգամ հսկա  
սարերն են քայքայվում ու վեր ածվում մանրահատիկ  
ավազի: Դու բացառություն չէիր կարող լինել ու գիտեիր  
դա:

Բայց ես, եղբայրս, քեզ երբեք չեմ տեսել, կներես,  
եթև ասեմ՝ դիակի «դերում»: Չեմ տեսել, դրա համար էլ  
չեմ հավատում, թե իբր քո կյանքի մի որոշ ժամանակահատ-  
վածում նաև... դիակ ես եղել: Ես տեսել եմ քո գերեզմանը  
միայն և ինձ ասել են, որ դա... բռնն է: Իսկ ռուսանողական  
ընկերս՝ Լյովան, մարմարի վրա դաջել է քո ողատկերն ու  
դահ տվել հավերժին:

15  
Ու որոտրկացել է բողոքն առ Աստված, առ Քրիստոսն.

*Քո արածը քեզ դու՞ր եկավ, Քրիստոս,  
Իմ եղբորը դու ո՞ր տարար, Քրիստոս:*

*Ի՞նչ խաղ էր սա, որ խաղացիր իմ գլխին,  
Թե՞ իմ եղբոր կարիքը կար, Քրիստոս:*

*Թե՞ իմ եղբոր պատկերն էիր ուզում դու  
Գարձնել դարզ ու աստղանկար, Քրիստոս:*

*Ու նայում է ինձ իր տայծառ նկարից,  
Նկա՞ր, չէ, դա արցունքս է դադ, Քրիստոս:*

*Արցունքս է դա՝ կաթիլ-կաթիլ ծովացած...  
Պիտի խեղդի ծովն այդ քեզ, գառ, Քրիստոս...*

Իսկ դու անբնդիառ ուզում էիր գնալ.

*... Ընկերներս այնտեղ՝  
Մարտադաշտում անեղ,-  
Ես չեմ ուզում մնալ,  
Ես գնում եմ, մայրի՛կ:*

*Չնեղանաս ինձնից,  
Որ թողի քեզ մենակ,*

**Ես դեռ կգա՛մ մի օր,  
Ես դեռ կգա՛մ:**

**Դու սպասիր հույսով,  
Դու սպասիր, մայրիկ,  
Հաղթանակին մեր մեծ  
Ու քո որդուն:**

**Ես դեռ կգա՛մ մի օր,  
Ես դեռ կգա՛մ...  
Իսկ հանկարծ,  
Հանկարծ երե... չգամ՝**

**Դու չլացես, մայրիկ,  
Դու կստասես հույսով,  
Ես դեռ կգա՛մ,  
Կգա՛մ,  
Կգա՛մ,  
Կգա՛մ...**

**Կգաս: Կգաս՝ որդես անորջ, որդես քաղցր հուշ,  
որդես տարեմուտի բարի երազանք: Կգա՛ս...**

**Պատե՛լ է սիրաս մի նի՛ն դառնություն ու քե՛ն,  
Եկե՛ջ չորե՛կ է բակում նոր տարին արդեն:**

Եկե՛լ չորեկ, ուր-որ է դուռս կրակի,  
Մամվել տղաս կրացի դուռն առանց վախի:

Եկե՛լ չորեկ է, սակայն եղբայրս չկա,  
Բայց թվում է՝ ուր-որ է, հենց հիմա կգա:

Կգա ու ճիշտ վայրկյանին դուռս կրացի  
Եվ կարոտած տանս հետ կնստի նացի:

Կգա: Սակայն անցնում է վայրկյանը նշված,  
Հի՛ն է դառնում նոր տարին, տխու՛ր ու... անցա՛ծ:

Ու չի գալիս եղբայրս: Գառնությու՛ն է ծով:  
Լուռ անցնում են օրերս՝ տխուր ու մոլոր:

Լուռ անցնու՛մ են օրերս: Միրաս ցավ է զուր,-  
Ուրախանալ չի թողնում տխրությունս լուռ:

Չես գալիս... Ուրեմն՝ դու աներկրային ես, բայց և՛  
ծաղիկ ու ծիլ ես, ծառ ու հող ես դու, նաև... արձան ես:  
Նաև՝ երգ ես դու շուրթերին մանկանց և ինչ էլ դատմեն  
նրանք քո մասին՝ իրական է ու լցված հավատով...

## ՍԱՄՎԵԼԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

*Իմ հորեղբայր Անդրանիկը  
Շատ է սիրելի Հայրենիքը:*

*Երբ Արցախ է թուրքը մտել՝  
Նա զինվոր է իսկույն գրվել:*

*Գեղացիքն իր տան է առել  
Ու Մարտակերտ իսկույն հասել:*

*Մերթ՝ Մաղափուզ, մերթ՝ Մոխրաբաղ,  
Մեծշեն, Օմար ու Գյուլաբաղ,*

*Որ եղել է՝ կռվել է նա,  
Որ կռվել է՝ հաղթել է նա:*

*Ու տարավել է թուրքը նորից,  
Փախել մեր շեն Կոճաղտոսից...*







## ՍՈՒՍԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՅ

*Իմ հորեղբայր Անդրանիկը  
Ջոնվեյ է մարտում,-  
Պաշտոյանելով Հայրենիքիս  
Մահմաններն անբուն:*

*Քաջ է եղև կռվի դաշտում,-  
Գեղացրորդ արի,  
Կռվեյ է, որ հի՛ն Արցախիս  
Ծովսը չմարի:*

*Կռվեյ է ու... հաղթեյ թորթին՝  
Ջոնվելով անգամ,  
Ու գրկեյ է սիրող մոր տես  
Մայր հողը նրան...*



## ՄԱՐԻԱՄԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

*Իմ հորեղբայր Անդրանիկը  
Ինձ Մարիամ է անվանել,  
Պաշտել է շատ Աստվածամորն  
Ու Ասածուն է նա դաշտել:*

*Բայց եղել է կռիվ մի մեծ,  
Ավեր, արյուն ու թալան,  
Ու նետվել է նա թեժ մարտի.  
- Տեր Աստվածն ինձ դանադար՝ն...*

*Աստված, սակայն, չի դանդաղանել՝  
Նա զոհվել է այդ մարտում,  
Իր արյունով փրկված հողը  
Հայավարի է ծաղկում...*

*... Երբ խաղում ենք ընկերներով՝  
Մոտ չեմ խոսում ես բակում,  
Միշտ երգվում եմ՝ «Աստված վկա»,  
Եվ երգումս չեմ խախտում...*



23



## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՅ

*Իմ հորեղբայր Անդրանիկը  
Ինձ իր անանն է թողել,  
Մեկ էլ՝ փրկված Հայրենիքը,  
Որը նա շատ է սիրել:*

*Եվ զոհել է կյանքը ջանել,  
Որ առյրի Հող-հայրենին,  
Ու միշտ դարսովի թուրքը վայրի՝  
Մեր սխերիմ թշնամին:*

*... Ես էլ շուտով կմեծանամ:  
Իսկ թե կրկին թուրքը գա,  
Չեմ երկնջի՝ ծարափ դաշտում  
Լինել քեզ տես, հորեղբայր...*



Մի զարնացիր, եղբայրս: Այո՛, ա՛յս Անդրանիկին դու չես տեսել: Նա ծնվել է քո զոհվելուց երկու տարի հետո միայն և այսօր դեռ մեկ ու կես տարեկան է: Իր առաջին բառերն է թոթովում փոքրիկ Անդրանիկը, իսկ դու չես լսում, անհաղորդ ես այս ամենին ու անտարբեր, սակայն ոչ անմասն, որովհետև ամեն անգամ, երբ արտաբերում եմ նրա անունը՝ սիրտս ցավից կծկվում է, բայց և իսկայն զգաստանում եմ այն մաքից, որ գոնե դրանով կարողանում եմ հաղորդակցվել քեզ հետ: Դու միշտ կաս, դու աղբյուր ես, ու ես ամեն օր կարողանում եմ զրուցել քեզ հետ՝ դիմելով այդ փոքրիկ արարածին:


Նա քեզ նման ոսկեզանգոտ է ծնվել և, կներես, եթե ասեմ՝ աղբյուր է քո փոխարեն: Ոչ, ջու քո տեղն ունես: Օրը՝ օրին, տարին՝ տարուն գունարվելով ավելանալու է տարիքդ, սակայն միշտ մնալու ես 27-ամյա երիտասարդի դիմագծերով: Նա աղբյուր է ի՛ր փոխարեն, բայց անընդհատ հիշեցնելով քո գոյությունը...



Ներիր, եղբայրս:

Ես ինքս ինձ հետ եմ խոսում: Իսկ դու հիշիր, որ կարևորը դիմանալն է: Դիմացիր բոլոր նկրտումներին, որ





*...Որդես մի վերջին լուսանկար,-  
Հայացքը՝ խոստուն, իսկ հույսը՝ մատ:*

կյտրում է մեր դեմ ոխերիմ թշնամին:

Զգիտե՛մ էլ ինչ գրեմ:

Գու գրիր: Գրիր, որ լավ ես: Գրիր, որ ես էլ լավ լինեմ:

Գու գրիր, որ ուրախ ես: Գրիր, որ ես էլ ուրախ լինեմ:

Եվ շոտ վերադարձիր, որ նկարդ իջեցնեմ դատից՝ սիրտս թեթևանա, թե չէ՝ դատին նայել չեմ կարողանում...

Հա, մոռացա ասել, որ Ալվարդն ամուսնացել է: Արդեն երեխա ունի: Տղա: Շատ է երազել քո անունով կոչել նրան, որ միշտ իր կողքին լինես, չէ՞ որ քույրերի՞ մեջ ամենաշատը նրան էիր սիրում: Անուշիկն ու Արևիկ վերջերս միայն կարողացան գալ ռուսաստաններից: Եկան ու տեսան վերջապես երեք տարեկան գերեզմանդ, բայց դե՛ քույրեր են, չէ՞, նրանց արցունքներից երևի լճեր են գոյացել:

Գե, Անահիտի մասին չեմ ասում, դու նրան միշտ ես տեսնում՝ թեքված սնարիդ. մանուկ օրերից ես, չէ՞, նրա ուսերին եղել, մինչև մեծացել տղամարդ ես դարձել: Նա թեզ հաճաք միայն քույր չէ, մայր էլ է եղել, դրա հաճաք է, որ չի կարողանում հաշտվել հետդ. «Այս ի՞նչ արիր»:

Եղբայրս, հայրիկն ու մայրիկը քո զոհվելուց հետո  
էլ ավելի են ձերացել, բայց դեռ դիմանում են, թեև աղբյւր  
զնալով դժվարանում է...

Ուրիշ է՞լ ինչ գրեմ:

Գու գրիր: Շուտ-շուտ: Երկու ազատ բողե գաիր  
ու երկու տողան երկու բառով գրիր, որ լավ ես, որ ես էլ  
լավ լինեմ:

Այսբանք:

Գրիր:

Մղասում եմ:

*Անկեզ կարոտով՝*

*քո եղբայր ԱՐԻՍ*

29

Հ. Գ. Մի կշտանքիր ինձ, եղբայրս: Մի ասա, թե.  
- Ավելի արժանիները կան:

Կան, իհարկե, իսկ դու ինչո՞վ ես դակաս նրանցից,  
ընդհակառակն՝ զուցե ինչ-որ տեղ նաև ավելին ես արել:  
Ծառայությունը սկսել ես գլուղի ֆիդայական ջոկատի  
տղաների հետ, բոլորի աչքի առաջ ու բայտրն էլ տեսել են  
քո մարտական բարձր ոգին, դատրաստակամությունը՝  
ցանկացած հանձնարարության կատարման համար: Նույն  
ձևով ես դրսևորել քեզ նաև հակառանկային դիվիզիոնում,  
«Ազատագրական բանակի» Վլադիմիր Բալայանի  
անվան ջոկատում, և, վերջապես, «Խալասողի» գումար-  
տակում:

...Ամեն անգամ, երբ գլուղ եմ գնում, համազյու-  
ղացիները կշտանքում են ինձ.



30

*Նկարին է նայում որդու,-  
Գուցե խոսի՞ մոր հետ թարուն,  
Հայրը գիտե՞ որդին չկա,  
Ու ... ծերանում են ախանա:*

- Ինչո՞ւ չես հետաքրքրվում,- ասում են,- Անդրա-  
նիկն իր արածի համար արժանի է կառավարական բարձ-  
րագույն դարգևի:

Իսկ ես, ի տատասխան, բոթվում եմ ուսերս, իբր՝  
- Ի՞նչ անեմ...

Ու թեև քո արածն ըստ արժանվույն չի գնահատվել,  
թեև չես արժանացել կառավարական դարգևի՝ փույթ  
չէ, քանզի դու գիտեիր, որ անձնագոհության գնում էս ոչ  
հանուն փառքի, այլ՝ քո հայրենի հողի ազատության ու  
անկախ գոյակցության: Իսկ ես այս գործին ձեռնամուխ  
եղա միայն ու միայն մոռացության մշուշը քո հիշատակից  
ցրելու նդատակով: Եվ քանի-քանի՝ խիզախ քաջորդիներ,  
31 ովքեր հայրենիքի փրկության համար առանց երկմտելու  
զոհել են ամենաթանկը՝ կյանքը, այսօր հանիրավի մոռա-  
ցության են մատնված: Նաև՝ անուշադրության: Նայնխակ  
կան տղաներ, որոնց մասին երկու տող անգամ չի գրվել:  
Այդ գործում այսօր մեծ է մեր՝ աղբորդներին դերը և մենք  
ողեսք է գտնվենք մեր բարձրության վրա, այլապես՝ վաղը  
ուշ է լինելու...

08.06.1997

(Այսօր քո ծննդյան օրն է, եղբայրս: Այսօր դու 30  
տարեկան ես: Այսօր էլ, ինչդես 30 տարի առաջ, ականջ-  
ներես մեջ զիլ-զանգ ծնվում է Լիզա արայի աղջկա զրնգուն  
ձայնը.

-Մեր Լենան մի ոսկեզանգուր տղա է բերել... ար

... Այսօր դու 30 տարեկան ես:

Շնորհավոր ծնունդդ, եղբայրս...):



Գրական-գեղարվեստական  
հրատարակություն

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ


**ԱՆԳՐԱՆԻԿ,  
ԱՅՄԻՆՔՆ՝  
ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ**

(ակնարկ՝ նամակով և  
բանաստեղծություններով միահյուս)

*խմբագիր՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Գեղ. խմբագիր՝ Վ. ՕՎՅԱՆ  
Սրբագրիչ՝ Ն. ՕԴԱՆՋԱՆՅԱՆ*

«Հորիզոն» տպագրատուն, Ստեփանակերտ, 1997 թ.  
32 էջ,  
տպ.՝ 1000,  
ԼՂ - 779:

**ԸՆԴՈՒՆԵԼ ՈՐՊԵՍ ՆԿԵՐ**





*Այստեղ ես հանգչում: Գիրքավորված  
Ընկերներիդ հետ՝ երեք շաբաթով,  
«Գրաված» վերջին բարձունքից այս  
Հսկում եք կրկին քուն ու անդորր...*